ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 52-Լ

14 «հունիսի» 2023թ. — ք. Էջմիածին

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023Թ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով.
Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2023 թվականի հունիսի 14-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Դիանա Գասպարյան | | | | 9. Գոհար Նիկողոսյան | | | |
| 2. Արսեն Պետրոսյան | | | | 10. Հրայր Ավետիսյան | | | |
| 3. Նաիրա Բաանեցյան | | | | 11. Աննա Կիրակոսյան | | | |
| 4. Արամայիս Միրզոյան | | | | 12. Սևակ Խաչատրյան | | | |
| 5. Լիլիթ Միրզախանյան | | | | 13. Վահրամ Ղարիբջանյան | | | |
| 6. Ներսես Մելիքյան | | | | 14. Կարեն Գևորգյան | | | |
| 7. Վարդան Գրիգորյան | | | | 15. Էդգար Թամազյան | | | |
| 8. Կարեն Մովսիսյան | | | | 16. Արսեն Ղամփյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

*ՀԱՎԵԼՎԱԾ*
*Վաղարշապատ համայնքի ավագանու*
*Երրորդ նստաշրջանի 2023 թվականի հունիսի 14-ի*
*արտահերթ նիստի թիվ 52-Լ որոշման*

# ՕՐԱԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 168 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 20-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՈՐՄԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ՋՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 53-Ն

«14» հունիսի 2023թ. ք. Էջմիածին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 - Ի N 166-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի <<Վաղարշապատ համայնքի 2023թ. բյուջեի հաստատման մասին> թիվ 166-Ն որոշման և նշված որոշմամբ հաստատված թիվ 2 և թիվ 3 հատվածների մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Դիանա Գասպարյան | | | | 9. Գոհար Նիկողոսյան | | | |
| 2. Արսեն Պետրոսյան | | | | 10. Հրայր Ավետիսյան | | | |
| 3. Նաիրա Բասենցյան | | | | 11. Աննա Կիրակոսյան | | | |
| 4. Արամայիս Միրզոյան | | | | 12. Սևակ Խաչատրյան | | | |
| 5. Լիլիթ Միրզախանյան | | | | 13. Վահրամ Ղարիբջանյան | | | |
| 6. Ներսես Մելիքյան | | | | 14. Կարեն Գևորգյան | | | |
| 7. Վարդան Գրիգորյան | | | | 15. Էդգար Թամազյան | | | |
| 8. Կարեն Մովսիսյան | | | | 16. Արմեն Խալֆյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքի
ավագանու 14 հունիսի 2023թ.
թիվ 53 - Ն որոշմամբ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 2 ՀԱՏՎԱԾԸ

2. Բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման ՝ հատված 2

Հազար դրամ

| No | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2023թ. ծրագիր |
|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 2486246.4 |
| 1 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 326459.7 |
| 1,1 | Տեղական ինքնակառավարում | 326459.7 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ | 652626.1 |
| 2,1 | Նախադպրոցական դաստիարակություն | 424520.8 |
| 2,2 | Արտադպրոցական կրթություն | 228105.3 |
| 3 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) | 20000,0 |
| 4 | ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ | 251205.7 |
| 4,1 | Գրադարաններ | 37863.3 |
| 4,2 | Մշակույթի տներ | 39641.8 |
| 4,3 | Թանգարաններ | 16715.6 |
| 4,4 | Սպորտ | 118525.0 |
| 4,5 | Այլ ծրագրեր | 38460.0 |
| 5 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 653312.5 |
| 6 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | -266000.0 |
| 7 | ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԻՆ ՉԴԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ | 848642.4 |
| 7,1 | Կապիտալ տրանսֆերտ | 312982.7 |
| 7,2 | Միջազգային կազմակերպություն | |
| 7,3 | Այլ ծրագրեր /ֆոնդ. բյուջե/ | 535659.7 |
| 7,4 | Վարչական մասի պահուստային ֆոնդ | |

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 3 ՀԱՏՎԱԾԸ

3. Բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման ՝ հատված 3

Հազար դրամ

| No | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2023թ. ծրագիր |
|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 2486246.4 |
| Ա | Ընթացիկ ծախսեր | 1903604.0 |
| | Աշխատավարձ | 628312.0 |
| | Էներգետիկ ծառայություններ | 94803.3 |
| | Կոմունալ ծառայություններ | 1625.9 |
| | Կապի ծառայություններ | 5711.0 |
| | Ապահովագրական ծախսեր | 3700.0 |
| | Ներքին գործուղումներ | 500,0 |
| | Արտասահմանյան գործուղում | 3000,0 |
| | Համակարգչային ծառայություն | 500,0 |

| | | |
|---|---|---|
| | Տեղեկատվական ծառայություններ | 1000,0 |
| | Ներկայացուցչական ծախսեր | 1500,0 |
| | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 38000.0 |
| | Մասնագիտական ծառայություն | 2000,0 |
| | Շենք. և կառույց. ընթաց. նորոգ. | 56000.0 |
| | Մեք. և սարք. ընթ. նորոգում. | 5500,0 |
| | Գրասենյակային նյութեր և հագուստ | 12800.0 |
| | Տրանսպորտային նյութեր | 99180.0 |
| | Առողջապահական և լաբորատոր նյութեր | 500,0 |
| | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 1000,0 |
| | Հատուկ նպատակային այլ նյութեր | 32000.0 |
| | Սոց. օգնության նպաստներ բյուջեից | 32240.0 |
| | Սուբսիդիաներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին | 865371.8 |
| | Ընթացիկ դրամաշնորհներ միջազ. կազմակերպություններին | 600,0 |
| | Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 1960,0 |
| | Այլ կապիտալ դրամաշնորհներ | 8800.0 |
| | Այլ հարկեր | 4000,0 |
| | Քաղաքացիական պաշտպանություն | 3000,0 |
| | Պահուստային ֆոնդ | |
| բ | Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր | 848642.4 |
| | Նախագծահետազոտական ծախսեր | 11125.0 |
| | Շենք. շինությ. կապ. նորոգ. | 796517.4 |
| | Տրանսպորտային սարքեր | |
| | Վարչական սարքավորումներ | 39000.0 |
| | Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր | 2000.0 |
| | Պահուստային ֆոնդ | |
| գ | Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | -266000,0 |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | -14000,0 |
| | Հողի իրացումից մուտքեր | -252000,0 |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | |
| | Կապիտալ տրանֆերտ | |
| | Միջազգային կազմակերպ. մուտքեր | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 - Ի N 166-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և Ծրագրի նախաձեռնող խմբի միջև կնքած 01.06.2023թ. թիվ WAFT-AR-03 ծրագրի հայտը անհրաժեշտություն է առաջացել Վաղարշապատ համայնքի 2023 թվականի հաստատված բյուջեում կատարել վերաբաշխում:

Հաշվի առնելով վերոգրյալը «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28 -ի N 166-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունը.

1. Նվազեցնել՝

2.1. Արտադպրոցական դաստիարակության /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածը /հոդ. 4511/ 8800.0 հազ. դրամ:

2. Ավելացնել՝

2.1. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <Այլ կապիտալ դրամաշնորհներ> հոդվածը /հոդ. 4657/ 8800.0 հազ. դրամ:

3. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատի համայնքի ավագանու 2023 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 54-Ն

«14» հունիսի 2023թ. ք. Էջմիածին

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Դիանա Գասպարյան | | | |
| 2. Արսեն Պետրոսյան | | | |
| 3. Նաիրա Բաւենցյան | | | |
| 4. Արամայիս Միրզոյան | | | |
| 5. Լիլիթ Միրզախանյան | | | |
| 6. Ներսես Մելիքյան | | | |
| 7. Վարդան Գրիգորյան | | | |
| 8. Կարեն Մովսիսյան | | | |
| 9. Գոհար Նիկողոսյան | | | |
| 10. Հրայր Ավետիսյան | | | |
| 11. Աննա Կիրակոսյան | | | |
| 12. Սնակ Խաչատրյան | | | |
| 13. Վահրամ Ղարիբջանյան | | | |
| 14. Կարեն Գևորգյան | | | |
| 15. Էմմա Պատուրյան | | | |
| 16. Էդգար Թամազյան | | | |
| 17. Արմեն [illegible]յան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի ավագանու
2023 թվականի հունիսի 14-ի
թիվ 54-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգի հետ կապված հարաբերությունները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Վաղարշապատ համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգի գործողությունը տարածվում է Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում տեղակայված (գտնվող)՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման, այդ թվում՝ լվացման, և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման, բարեկարգման (սալիկապատման կամ ասֆալտապատման) աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորության ապահովումը՝ անշարժ գույքի մուտքի համար.

4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների պարբերաբար մաքրումը և կանաչապատում.

5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում.

6) ներհամայնքային և միջհամայնքային նշանակության փողոցներում գտնվող առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Շինարարության թույլտվություն պահանջող և չպահանջող բարեկարգման աշխատանքների ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ:

8. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի և տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափագրում, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:

9. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ.

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

10. Շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Վաղարշապատ համայնքի ղեկավարի (կամ նրա կողմից լիազորված անձի) կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ-սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից:

11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ՝ <<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին>> ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2338-Ն որոշմամբ սահմանված պահանջների համաձայն: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Վաղարշապատի համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

12. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

13. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահոված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը, ընդ որում՝ մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08.00-ից մինչև 09.00-ն և երեկոյան ժամը 18.00-ից մինչև 19.00-ն.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11.00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21.00-ին և դրանից հետո.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտբետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին.

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

3) Կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների մուտքերի աստիճաններին կից հատվածներում (աստիճանների բացվածքի եզրերին) անցորդների անվտանգությունը ապահովելու նպատակով պետք է տեղադրվեն (կառուցվեն) մայթի նիշից 60-90 սմ բարձրությամբ թեթև կոնստրուկցիաներով ճարտարապետական կառուցվածքներ: Կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների մուտքերը սույն կարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն պետք է ապահոված լինեն անհրաժեշտ լուսավորությամբ:

14. Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

15. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի <<Բարեկարգում տնօրինություն>> բյուջետային հիմնարկի կողմից տրամադրված ֆիտոնախագծի համաձայն:

16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն համաձայնեցնում է Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի հետ:

17. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

18. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

19. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

20. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից),

5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված տարածքի պարագծից 50-100 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

21. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգ» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի հիման վրա:

**Իրավական ակտի ընդունման նպատակը և կարգավորման անհրաժեշտությունը.**

Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքերի սեփականատերերի կամ տիրապետողների կողմից իրենց տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման պարագայում կբարելավվի համայնքի արտաքին տեսքը, գեղեցկությունն ու մաքրությունը, դրանով կապահովվի նաև բնակչության էսթետիկ հարմարավետությունը:

**Իրավական ակտի ընդունման կապակցությամբ բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին.**

Նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**Նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը.**

Նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու համայնքի արտաքին տեսքը՝ գեղեցկությունը և մաքրությունը:

**Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ապահովել համայնքի բարեկարգ վիճակը և գեղեցիկ արտաքին տեսքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

| 1. Արդարադատության նախարարություն | 19.05.2023 թ.<br>№1/27.2/25095-2023 գրության |
|---|---|
| 1.<<Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախաբանում <<36-րդ>> բառերից հետո անհրաժեշտ է լրացնել <<կետի>> բառը: | Ընդունվել է |
| 2. Հավելվածի 1-ին կետում <<սահմանվում է>> բառերն անհրաժեշտ է փոխարինել <<կարգավորում են>> բառերով, իսկ <<էությունը, ծավալը և պայմանները>> բառերը՝ <<էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգի հետ կապված հարաբերությունները>> բառերով: | Ընդունվել է |
| 3. Նկատի ունենալով իրավական որոշակիության սկզբունքի պահանջները՝ Հավելվածի ողջ տեքստում առկա <<պատշաճ պահպանման>>, <<անհրաժեշտ լուսավորության>>, <<տոնական զարդարում>>, <<պատշաճ ձևով>>, <<անհրաժեշտ թվաքանակով աղբարկղներ>>, <<պարբերաբար մաքրում>> և նմանատիպ այլ անորոշ ձևակերպումներն անհրաժեշտ է հստակեցնել: | Չի ընդունվել.<br>Տեղ գտած ձևակերպումները որոշակիութան սկզբունքի հետ անհամատեղելիության հարց ի հայտ չեն բերում, քանի որ ձևակերպումները նպատակ ունեն կանխորոշել <<Կարգ>>-ի իմաստով որոշակի սուբյեկտների պատշաճ վարքագիծ՝ ուղղված բարեկարգման կարգի պահանջները պահպանելուն: |
| 4.Հավելվածի ողջ տեքստում առկա <<օրենսդրությամբ նախատեսված>>, <<օրենսդրությամբ նախատեսված կարգով>>, <<գործող ընթացակարգով սահմանված>>, <<սահմանված պահանջների համապատասխան>> և նմանատիպ այլ անորոշ ձևակերպումներն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, այն է՝ հղումները կատարվում են հստակ և ուղղակի: | Ընդունվել է |

| | |
|---|---|
| 5. Հավելվածի 7-րդ կետում անհրաժեշտ է նշել իրավական ակտի կրճատ անվանումը նկատի ունենալով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 17-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի իրավական ակտի հղումներ կատարելիս պետք է նշել իրավական ակտի կրճատ անվանումը: Վերջինիս կրճատ անվանումը հիշատակելիս առաջնորդվել <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով: | Ընդունվել է |
| 6. Հավելվածի 9-րդ կետում պարզաբանման կարիք ունի այն հանգամանքը, թե ինչ համաձայնեցված նախագծի մասին է խոսքը: Նույն դիտողությունը վերաբերում է նաև Հավելվածի 10-րդ կետին: | Չի ընդունվել. <<Կարգ>>-ից պարզորոշ է, որ բարեկարգման աշխատանքները պետք է իրականացվեն համայնքի ղեկավարի հետ նախապես համաձայնեցված նախագծի պահանջներին համապատասխան: |
| 7. Հավելվածի 11-րդ կետում անհրաշետ է հստակեցնել, թե ինչ ընթացակարգով են կատարվելու դրանում նկարագրվող համապատասխան համաձայնեցումները և առաջարկների ներկայացումը: | Ընդունվել է<br>Կատարվել է կետի լրացում: |
| 8. Հավելվածի 16-րդ կետում անհրաշետ է պարզաբանել, թե ինչ իրավական հետևանքներ կարող են առաջանալ այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն չհամաձայնեցնի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի հետ: | Չի ընդունվել. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով իրավահարաբերությունների կարգավորման շրջանակներում նպատակ է հետապնդվում տվյալ ոլորտում համայնքում սահմանել պարտադիր վարքագծի կանոններ: Պատասխանատվության միջոցների կամ տեսակների սահմանումը դուրս է ավագանու լիազորությունների շրջանակից, քննարկվող դեպքում այն հիմնավորմամբ, որ դրանք հանդիսանում են օրենքի կարգավորման առարկա: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան, հեռ. 594015
Էլ. փոստ sirvard.gevorgyan@justice.am

№ 01/27.2/25095-2023
«19» մայիսի 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՏԻԿԻՆ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

**Հարգելի՛ տիկին Գասպարյան,**

Ի պատասխան Ձեր՝ 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 2201 գրության՝ կից ներկայացվում է «Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

5/19/2023

X

Sirvard Gevorgyan

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GEVORGYAN SIRVARD 6804830105

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Արդարադատության
Նախարարություն

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

1. «Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախաբանում «36-րդ» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «կետի» բառը:

2. Հավելվածի 1-ին կետում «սահմանվում է» բառերն անհրաժեշտ է փոխարինել «կարգավորվում են» բառերով, իսկ «էությունը, ծավալը և պայմանները» բառերը՝ «էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգի հետ կապված հարաբերությունները» բառերով:

3. Նկատի ունենալով իրավական որոշակիության սկզբունքի պահանջները՝ Հավելվածի ողջ տեքստում առկա «պատշաճ պահպանման», «անհրաժեշտ լուսավորության», «տոնական զարդարում», «պատշաճ ձևով», «անհրաժեշտ թվաքանակով աղբարկղեր», «պարբերաբար մաքրում» և նմանատիպ այլ անորոշ ձևակերպումներն անհրաժեշտ է հստակեցնել:

4. Հավելվածի ողջ տեքստում առկա «օրենսդրությամբ նախատեսված», «օրենսդրությամբ նախատեսված կարգով», «գործող ընթացակարգերով սահմանված», «սահմանված պահանջների համապատասխան» և նմանատիպ այլ անորոշ ձևակերպումներն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, այն է՝ *հղումները կատարվում են հստակ և ուղղակի:*

5. Հավելվածի 7-րդ կետում անհրաժեշտ է նշել իրավական ակտի կրճատ անվանումը՝ *նկատի ունենալով* «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց իրավական ակտի հղումներ կատարելիս պետք է նշել իրավական ակտի կրճատ անվանումը: Վերջինիս կրճատ անվանումը հիշատակելիս առաջնորդվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով:

6. Հավելվածի 9-րդ կետում պարզաբանման կարիք ունի այն հանգամանքը, թե ինչ համաձայնեցված նախագծի մասին է խոսքը:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև Հավելվածի 10-րդ կետին:

7. Հավելվածի 11-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ ընթացակարգով են կատարվելու դրանում նկարագրվող համապատասխան համաձայնեցումները և առաջադրանքների ներկայացումը:

8. Հավելվածի 16-րդ կետում անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ իրավական հետևանքներ կարող են առաջանալ այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն չհամաձայնեցնի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի հետ:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝**

5/19/2023

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

**Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին

10 մայիսի
2023թ.
ժամը 11:00-ին

2023 թվականի մայիսի 10-ին ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգ» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկում:

Ելույթ

Մ. Աբրահամյան Բացման խոսքով հանդես եկավ Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության տնօրեն Մամիկոն Աբրահամյանը: Ողջունելով ներկաներին՝ Մ. Աբրահամյանը նշեց, որ «Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգ» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետը, որի ընդունման նպատակն ու կարգավորման անհրաժեշտությունն է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքերի սեփականատերերի կամ տիրապետողների կողմից իրենց տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման պարագայում համայնքի արտաքին տեսքի, գեղեցկության ու մաքրության բարելավումը, բնակչության էսթետիկ հարմարավետության ապահովումը:

Նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում, կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու համայնքի արտաքին տեսքը՝ գեղեցկությունը և մաքրությունը:

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ապահովել համայնքի բարեկարգ վիճակը և գեղեցիկ արտաքին տեսքը:

Կարգի համաձայն սահմանվում են Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները:

Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Վաղարշապատ համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ

նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

